

եւ զուր . չունին զուլում եւ անիրաւութիւն .
 չկայ եւ որձապղծութիւն , եւ թէ ուրեք գտցի ,
 իսկոյն այրեն անխտիր : Չկայ գողութիւն ,²⁶⁵
 սողանութիւն , հարամութիւն . ոչ թէ միայն
 ի քաղաքսն , այլ եւ ի ճանապարհս եւ ան-
 վար վայր տեղս եւ յանտառս մացառուտս .
 եւ ոչ գիտեն անդ թէ քարվանն ինչ է , այլ
 որ տեղ կամի ոք գնալ , միաւոր երթայ ա-²⁷⁰
 նահ . եւ թէ ոսկի թագ գնես ի գլուխտ՝ ոչ
 վնասիս . զի եւ մեք , որ անլեզու եւ անձանօթ
 դարիպ էաք , յերկար ճանապարհնին գնայաք
 խաղաղ եւ անդորր . որպէս ի ժամանակս
 Մօրկայ կայսերն³ : Եւ ամէն նետածրգ՝ պան-²⁷⁵
 տոկ եւ չնլիք կայ : Այլ եւ աղօթից եւ ժա-
 մու ժիր եւ հաստատ են , աւելի քան զՄահ-
 մէտականս . ոչ թէ միայն ծերք , այլ եւ
 տղայք , կանայք եւ նոր հարսներ եւ կոյս
 աղջկունք , ունելով գիրք ի ձեռս իւրեանց²⁸⁰
 երթան յեկեղեցիս . զի սօքա խրատեն զղա-
 ւակսն ըստ կանոնաց : Ոնց լեզուն բացվի՝
 Հայր մեր , Հաւատամք , Ողջոյն եւ Փառք ի
 բարձունս ուսցնեն . ձեռս խաչ հանել , առ
 Աստուած յաղօթս տարածել . եւ մինչ ի ճաշ²⁸⁵
 կամ պատարագէն չեղնեն , հաց չեն ի տալ .

264 ուր էք :

³ Հմմտ . Պատմութիւն Հացունեաց խաչին , Չեռ .
 վիեննայի Թ . 791 , թղ . 132 ա . « ոմանք յառակս ար-
 կեալ ասէին թէ « Իրրեւ յաւուրս Մօրկայ նստեալ էք
 անհոգս » :